

11465



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան



«21» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 224 - 24

Նախաձեռնող՝

«ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ
Ք. Երևան, Քոչարի 14

Գործունեությունը՝

Եղվարդի ավազակոպճային խառնուրդի
հանքավայրի արդյունահանում
Կոպայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 224 - 24

«21» հոկտեմբերի 2024թ.

Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝
Ներկայացված նյութեր՝

«ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն նախագծային
փաստաթղթեր

Գործունեության տեսակը՝

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Նաիրի համայնք,
Նաիրի բնակավայր

Ներածական մաս. Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Նաիրի բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են՝ Եղվարդ (3.0 կմ), Կարբի (5.2 կմ), Նոր Երզնկա (3.0 կմ), Աշտարակ (5.5 կմ) բնակավայրերը:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ վարելահող:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի օգոստոսի 17-ի թիվ 2477-Ա հրամանով՝ ըստ A կարգի 563.2 հազ. մ³ քանակով:

Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հաստատված պաշարները դիտարկվել են որպես շինարարական ավազի արտադրության հումք՝ ավազը ջրով լվանալուց հետո՝ ԳՈՍՏ 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար»:



Խճի արտադրության հումք՝ ՀՍ ԳՈՍՍ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար»:

Սույն նախագծով նախատեսվում է՝

- տեղամասը շահագործել բաց եղանակով, 563.2 հազ. մ³ արտադրողականությամբ /մարվող պաշար/, տարեկան՝ 39550,6 մ³ ծավալով,
 - արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 455.7 հազ.մ³, տարեկան 32000 մ³ ծավալով ԱԿԽ-ի զանգված,
 - ծառայման ժամկետը՝ 14.3 տարի,
 - հանույթային աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ համալիրով,
 - բացահանքի աշխատանքները կազմակերպելու համար հանքավայրում նախատեսվում է արտադրական հրապարակ իր անհրաժեշտ կառույցներով,
 - շահագործման ավարտից հետո կատարվելու է հանքավայրի ռեկուլտիվացիա:
- Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն են.

- | | |
|-------------------|-----------------|
| 1. Y=8452492.0000 | X=4465508.0000, |
| 2. Y=8452443.7000 | X=4465596.7000, |
| 3. Y=8452407.0000 | X=4465664.0000, |
| 4. Y=8452523.0000 | X=4465734.0000, |
| 5. Y=8452594.0000 | X=4465777.0000, |
| 6. Y=8452662.4657 | X=4465722.2275, |
| 7. Y=8452714.0000 | X=4465681.0000, |
| 8. Y=8452609.4000 | X=4465599.5000 |

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 280 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 175 մ,
- բացահանքի ամենամեծ խորությունը՝ 20.6 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 13.94 մ,
- օտարման մակերեսը՝ 4.04 հա:

Արդյունահանված օգտակար հանածոն նախատեսվում է տեղափոխել մինչև 6,0 կմ հեռավորության վրա գտնվող գոյություն ունեցող ՋՏ կայանք, որը գտնվում է «ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ-ին պատկանող արտադրական տարածքում:

Բացահանքի բոլոր հանքաստիճանները բացվելու են բացահանքի արևմտյան մասից մոտեցող գրունտային ճանապարհից, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Բացահանքը մշակվելու է ընդլայնական ընթացաշերտերով, միակողմանի մշակման համակարգով, վերևից ներքև՝ 5 մ բարձրությամբ հանքաստիճաններով:

Մակաբացման ապարները բացահանքի եզրագծի մեջ բացակայում են, ուստի մակաբացման աշխատանքներ չեն նախատեսվում և լցակույտ չի ձևավորվում:

Հանույթային և բարձման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է 2.0 մ³ շերտի տարողությամբ Komatsu PC 200LC-8MG մակնիշի հակառակ թևով էքսկավատորը, որի արտադրողականությունը հաշվարկվել է 352.8 մ³/հերթ:

Բուլդոզերային աշխատանքների համար նախատեսվում է օգտագործել ընկերության ենթակայության տակ գտնվող մեկ բուլդոզեր Komatsu D-155A-5 մակնիշի:



Բացահանքի տեխնիկական ջրով ջրամատակարարումը կատարվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը նախատեսվում է բերել HOWO Sinotruk ZZ1257N4341W /water tanker truck/ մակնիշի ջրցան լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով: Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է մոտակա Եղվարդ համայնքից՝ պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող հիմնական նյութերը հանդիսանում են փոշին և շահագործվող տեխնիկատրանսպորտային միջոցների առաջացրած ծխագազերը և գազային արտանետումները: Չոր եղանակներին փոշու ծավալները նվազեցնելու նպատակով նախատեսվում է ջրցանել արտադրական հրապարակներն ու գրունտային ճանապարհները: Ծխագազերով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում: Դիզելային շարժիչները պետք է ունենան ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Հաշվի առնելով աշխատող մեխանիզմների տեսակները, աշխատանքների բնույթը, հեռավորությունը մոտակա բնակավայրից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը և թրթռումների մակարդակը շրջակա բնակավայրերի տարածքում կլինեն բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ ցածր:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, կենցաղային աղբը:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Հարթեցումը կկատարվի արդյունաբերական հրապարակում 0,022 հա և բացահանքի հատակը 2.64 հա մակերեսը, ընդհանուրը՝ 2.662 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կազմում է 1185200 ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է 700.0 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել: Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ),
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում կանաչապատում թփուտներով,
- լեռնատրանսպորտային միջոցների վրա չեզոքացուցիչ սարքերի տեղադրում՝ արտանետումները կրճատելու նպատակով,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), ինչին տրվում է համապատասխան



թերություն, ինչն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաներում՝ դրանց հետագա ուտիլիզացման կամ երկրորդային վերամշակման նպատակով,

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում դրանց համար հատկացված առանձին տարածքում ապա հանձնում որպես մետաղական ջարդոն:

- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,

- կեղտաջրերի հավաքում բետոնապատ անթափանց հորում, ինչը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, պայմանագրային հիմունքներով,

- կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,

- բացահանքի շահագործման ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Բնապահպանական միջոցառումների համար ընկերությունը նախատեսում է հատկացնել 150.0 հազ ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,

2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

3. վայրի բնության, կենսամիջավայրի, կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150,0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Նաիրիի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:



Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Օրենսդրությամբ սահմանված կարգով շահագործման աշխատանքների ավարտից երկու տարի առաջ, անհրաժեշտ է հանքի փակման ծրագիրը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ

Հովիկ Մեսրոպյան

